

Ֆիանոբակտերիալ ակիներպների դերը Սևանա լճի էկոհամակարգում

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտաշխատողները առաջին անգամ ուսումնասիրել են ցիանոբակտերիալ ակիներտների դերը Սևանա լճի էկոհամակարգում:

Ֆիտոպլանկտոնի կարևոր բաղադրիչներից են կապտականաչ ջրիմուռները՝ ցիանոբակտերիաները: Աշնանը ցիանոբակտերիաների զգալի քանակություն քայքայվում է հատակային նստվածքներում կուտակման ընթացքում: Որոշ թելային թալում ունեցող ձկների բնորոշ է ակիներտների՝ սպորների ձևավորումը: Դրանք սովորաբար տարբերվում են վեգետատիվ մյուս բջիջներից, ունեն առավել հաստ թաղանթ, պարունակում են պաշարանյութեր, ուստի համարվում են առավել տուլերանտ, ինչի արդյունքում պահպանվում են հիդրոէկոհամակարգի հատակին և առաջին իսկ բարենպաստ պայմանների դեպքում կարող են զարգանալ և ամենա բազմացման ճանապարհով սկիզբ տալ ջրիմուռի նոր թալումի ձևավորման:

«Առաջին անգամ ուսումնասիրվել է ցիանոբակտերիալ ակիներտների դերը Սևանա լճի էկոհամակարգում: Պարզվել է, որ հատակային նստվածքներում ձմեռող այս ցիանոբակտերիաները համապատասխան պայմաններում կարող են ջրային միջավայրում նորից համալրել ցիանոբակտերիալ կազմը: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ Մեծ Սևանի հատակային նստվածքներում ակիներտները նկատելիորեն շատ են Փոքր Սևանի համեմատ: Լաբորատոր փորձերի արդյունքում պարզվել է, որ ակիներտների զարգացումն արգե-

լակվում է լույսի բացակայության և ճնշվում՝ կենսածին նյութերի ցածր կոնցենտրացիաների պայմաններում: Լուսավորության դեպքում լճի 1գ հատակային նստվածքում առկա ակիներտներից կարող է զարգանալ մինչև 21000 ցիանոբակտերիալ բջիջ»,- ասաց գիտական կենտրոնի Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի կիրառական հիդրոէկոլոգիայի լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու Գոռ Գևորգյանը: Նա նշեց, որ Սևանա լճում ակիներտային հետազոտությունները լրացնում են լճի գրեթե մեկդարյա պատմություն ունեցող հիդրոկենսաբանական տվյալներում այս մասով առկա հիմնարար բացերը:

Գիտական խումբն իրականացրել է նաև լճում ֆիտոպլանկտոնի որակական անալիզ՝ հիմնված Փոքր և Մեծ Սևանների 80 մ, 43 մ և 30 մ խորքոյա հատվածներում անցկացված հետազոտությունների վրա:

Ֆիտոպլանկտոնը կազմված է տարբեր խմբերի պատկանող միկրոօրգանիզմներից, որոնք, շնորհիվ քրոմատոֆորներում առկա պիգմենտների՝ մասնավորապես քլորոֆիլի մոլեկուլների, իրականացնում են ֆոտոսինթեզ՝ անօրգանական նյութերից (ածխաթթու գազ և ջուր) օրգանական նյութի սինթեզ՝ օգտագործելով արեգակնային լույսի էներգիան: Այս ունակության շնորհիվ, ստեղծելով օրգանական նյութ, ֆիտոպլանկտոնը սնունդ է տրամադրում սննդային շղթայի մյուս օղակներին: Ֆիտոպլանկտոնի կենսագործունեությունն ապահովվում է կենսածին նյութերի առկայությամբ: Կենսածին նյութերով



հիդրոէկոհամակարգի գերհարստացումը նպաստում է ֆիտոպլանկտոնային համակեցության որակական և քանակական կառուցվածքի փոփոխությանը:

Հետազոտություններն իրականացվել են «Սևանա լճում ծաղկող ցիանոբակտերիաների աճող խնդիրը. մեխանիզմների, շարժիչ ուժերի և նոր գործիքների հայտնաբերում լճի մոնիթորինգի և կառավարման համար» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորել է ԿԳՄՍ ճախարարության գիտության կոմիտեն:

Հետազոտություններն իրականացվել են Գերմանիայի Շրջակա միջավայրի հետազոտությունների Հելմհոլցի կենտրոնի հետ համագործակցությամբ:

Հետազոտական խմբում ներգրավված է եղել հինգ հայ և մեկ գերմանացի մասնագետ, այդ թվում՝ երեք երիտասարդ գիտնական:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին